

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 21.10.2020թ. թիվ 2011779873 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 18 >> 12 2020թ. 7-13 15839

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Նարինե Մկրտչյանի ՄԴ/157617-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Քաղաքացի Նարինե Մկրտչյանը (**ծանուցման հասցե՝** քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջան, Սարիթաղ, 7-րդ փողոց, 22-րդ տուն) դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011779873 որոշումը՝ նշելով, որ տեսանյութի ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ չի կատարել իրավախախտում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական ակտն ենթակա է կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:

Իրավախախտումն արձանագրած տեսանյութի ուսումնասիրությամբ պարզ է դառնում այն փաստը, որ Երևան քաղաքի Խորենացի - Բեյրութ - Իտալիա - Վ. Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում տեղադրված է 5.15.1 <<Երթևեկության ուղղությունները գոտիներով>> ճանապարհային նշան, իսկ <<HYUNDAI>> մակնիշի 96XR996 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 05.10.2020թ. ժամը՝ 18:24-ին նշված վայրում միայն դեպի աջ թույլատրող երթևեկության գոտուց երթևեկել է ուղիղ, հետևաբար թույլ տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով, ինչը նույնպես չի հիմնավորվել վարույթի ընթացքում:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները, հետևաբար նրան վարչական տույժ նշանակելու մասին որոշումն օրինական է և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 21.10.2020թ. թիվ 2011779873 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Նարինե Մկրտչյանին:

Կատարող Կ.Ահարոնյան
Հեռ. 011544783

